Բ. ՏԱՐԻ ՇԱԲԱԹ 31 ՅՈՒԼԻՍ 1899 ԹԻՒ 150

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 »
Օտարաշխարհի համար Տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »
Ամերիկայի համար
Տարեկան 2.50 տլր.
Վեցամսեայ 1.25 »

ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ է. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքնական անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։

)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

Նամակ եւ դրամ ղրկել Խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

Դրութիւնք ետ չեն տրուիր

)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

ՅԱՒԵԼՈՒԱԾ «ՇԱՐԺՈՒՄ»Ի

Բազմաթիւ Թրքախօս հայերու խնդրանքին վրայ՝ օգոստոսի մէջ պիտի սկսինք հրատարակել հայերէն տառերով և Թուրքերէն լեզուով թերթ մը «Շարժում»ի կէս ծաւալովը, շաբաթը երկու անգամ։

Յաւելուածը՝ որ պիտի պարունակէ օրուան քաղաքական ու ազգային լուրերէն զատ, խմբագրականներ, Թղթակցութիւններ և վիպակներ. պիտի ունենայ իր մասնաւոր խմբագրութիւնը, ինչպէս նաեւ բուն «Շարժում»էն զատ է անոր բաժանորդագրութիւնը որ է տարեկան 6 ֆրանք և ձեռքէ հատը 5 սանթիմ։

Արտասահմանի համար 1 ֆրանք աւելի է։

Բաժանորդագրութիւնը բացուած է այսօրուանէ և կանխիկ։

Հասցէ՝

Recdaction de «Charjoum»
Yarna (Bulgarie)

ՄԻ ՁՁԻԵԼԻ ՓԱՍՏ

Արտասահմանի հայ մամուլի մէջ սխալ է դարձել գրական կեղծիքը. ամբողջ գրուածքներ բացարել տարբեր մօքով, յայտնի դաւաճանին, աղատին պաշտպան հանդիսանալ, գրական շատ սովորական երեւոյթ են։ Եւ այդ գրական պոռնկութիւնը ինչո՞ւ համար է գիտէ՞ք, մի միայն անձնական սոսր կրքերին յագուրդ տալու համար։

* * *

Գրական կեղծարարները շատ են մեր մէջ. Նոյն չափով, որչափ բորբոքված են կրքերը, որչափ կատաղի է մեր կեանքում գոյութիւն ունեցող մաքուր և աղտոտ սկզբունքների միջեւ մղվող պայքարը։ Նրանք այնքան ցած, աղտոտ և լկտի են որ շատ անգամ մարդ շուարում է և ինքն իրեն հարցնում. արդեօ՞ք երբ մենք կարողանալու ենք ազատվել այս փտեցնող միկրոբներից։

* * *

Յայտնի է որ մամուլի դերն է լինել ժողովուրդների մտքի և բարոյականութեան առաջնորդը։ Այդ դերը աւելի շեշտվում է հայերիս համար, որովհետեւ մենք գրեթէ բոլորովին զուրկ ենք այն միւս հիմնարկութիւնից, որոնց մէջ ուրիշ ժողովրդների դեռահաս սերունդը կազմակերպվում է մտաւորապէս և բարոյապէս։ Մանաւանդ արտասահմանում հայ ժողովուրդը իր մտաւոր և բարոյական սնունդը մամուլից պէտք է ստանայ։ Բայց ո՞ր տեղից և ի՞նչպէս ստանայ, երբ արտասահմանի հայ մամուլի ներկայացուցիչների մեծ մասը ղեկավարվում է սոսր կրքերով և անասնական բնազդով. կեղծում է, ստում է, ամէն սուրբ գործ աղտոտում է, և ամէն ցած գործ փառաբանում է իր անձնական հաշիւին եկած միջոցին։

Մի խօսքով կեղծիքը, ցածութիւնը, բարոյականութեան և խելքի բացարձակ բացակայութիւնը աչքը ծակելու չափ սուր կերպով աչքի է ընկնում արտասահմանի հայ թերթերից շատերի մէջ։ Եւ այդ բոլորը տեղի ունի այն մամուլի մէջ, որ ամէն մի կաշկանդումից ազատ, համարձակ կարող էր ուսումնասիրել և պարզել բոլոր այն միջոցները որոնցմով կարելի է դարմանել մեր ժողովրդի անտանելի և բազմատեսակ ցաւերը։

* * *

Բայց ո՞վ է մեղաւոր, որ արտասահմանի մամուլի մի մասը բարոյական անկման գագաթնակէտին է հասել։ Նոյն մամուլի մաքուր ներկայացուցիչները և ինքը ընթերցող ժողովուրդը։

Մամուլի լաւ ներկայացուցիչները մի տեսակ չէզոք դիրք են բռնել դէպի իրանց անբարոյական և անբարոյականացնող ընկերները, իսկ ընթերցող ժողովուրդը առանց խտրութեան կարդում է ամէն բան ինչ որ տպվում է։

Ժողովուրդը կարող է արդարանալ իր անգիտակցութեամբ, իսկ մամուլի մաքուր և ազնիւ ներկայացուցիչները ի՞նչով կարող են արդարացնել իրանց անտարբեր չէզոքութիւնը. ոչ մի բանով և ոչ մի կերպով։

ՎԱՐԴՑ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պօլիս, 24 Յուլիս

Սկսինք մեր Պատրիարքէն ու Պատրիարքարանէն։ Գիտեմ ամէն հայու համար հետաքրքիր է նորութիւն մը իմանալ մեր կրօնական կեդրոնէն։

Ատենով Խրիմեան ալ Պատրիարք եղաւ, Վարժապետեան ալ, Իզմիրլեան ալ ... Նոյնիսկ բազմիցս արհամարհելի Աշըգեան ալ։ Պատրիարքն 50 ոսկի ամսական ունի։ Նախորդ պատրիարքներ շատ զիջող եղած են իրենց ռոճիկին առթիւ, եղած ատեն առեր են, չեղած ատենին համարեա միշտ նուիրեր են ազգային սնտուկին։

Օրմանեան ալ ունի իր ամսական 50 ոսկին, բայց հրեայ վաճառականի մը պէս ամսամէկին, առտուն կանուխ կը պահանջէ, առանց փարա մը թողնելու ... կայ եղեր, չըկայ եղեր չի հարցըներ։

Պատրիարքարանի մէջ հիւրերու, թղթակցութիւններու և այլ մանր ծախքերը առաջուան պատրիարքները (մինչեւ իսկ Աշըգեան) իրենց ռոճիկէն կը ծախսէին, մինչդեռ Օրմանեան «ի հաշիւ ազգի» կընէ։

Կառք մըն ալ ունի Օրմանեան փաշան և այդ կառքը մօտաւորապէս 16 ոսկիէն պակաս չի նստիր ազգային սնտուկին վրայ ամէն ամիս ...։

Ասկէ կը հետեւի պարզ թուաբանական երեւոյթ մը։ Երբ հասակէկ Օրմանեան իր քսակի անցուկ վիճակի մասին ցաւելով երկար կը մտածէր. հիմակ բաղդի օգնութեամբ բաւական դրամ ժողված ունի և ճարպն ալ անտանելի չափով շատցեր է։

* * *

Օրմանեանի հարստութեան մէկ աղբիւրն ալ աւելի հետաքրքիր է։ Ամէնուն յայտնի է՝ որ Օրմանեան ազգային տեսակէտով ոչ մէկ բողոք ներկայացուցած չէ և ոչ ալ ունէ քաղաքական բանտարկեալի մը համար միջնորդած։ Իր կողմէ հասարակ միջնորդութիւն մը, բառ մը բաւ էր որ խեղճ Կիւրճեանը բանտէն ազատէր ու հոս մնար։ Բայց Օրմանեան, դահճի վայել քայլով մը կործանեց այդ անձը ըսելով «ես չեմ կրնար երաշխաւորել անոր համար ...» ու ոստիկանութիւնը քշեց զանի ներսերը։

Բայց Օրմանեան միջնորդած է շա՜տ մը մասնաւոր անձերու համար։ Ի՞նչու, ա՛ս ի՞նչ առեղծուած է։

Պարզ է, մասնաւոր մարդիկ կերթան Օրմանեանի «փեսայի եղբօրը» տունը, երես երեսի սակարկութիւն կընեն պատրիարքին միջնորդութեանը համար. 20—50—100 ոսկի, գինը կը կտրեն և Օրմանեան ազգային կառքը կը նստի ու կը թռչի Բ. Դուռը կամ պալատը ...

Ինքն անձամբ սակ չառներ, այլ մշտական միջնորդ մը ունի՝ իր փեսայի եղբայրն է ան։

Աս ալ հարստանալու երկրորդ ճամբան է։ Երրորդն ալ Սուլթանէն ստացած նուէրն է ... Տիրոջ նետած փշրանքներն ու ոսկորները իր հաւատարիմ ստրուկին կամ իր դրան կենդանիին ...

* * *

Հանգիստ չեն թողուր Օրմանեանը արտասահմանեան հայերը։ Մենք դատապարտուած ենք Զաքարիայի պապանձումը պահել. իսկ արտասահման ... ոչ. Համիտի ձեռքերը հոն չեն հասնիր ...

Անգլեացները Պուլկարիայէն (կարծեմ Սիլիստրէէն) խեղկատակին մէկը մօլլայի փառաւոր ձեռք մը կղեստ էր ղրկած իբր նուէր Օրմանեանին։

Այժմ ալ բազմաթիւ նամակներ կուգան, որ մերթ կսպառնան, մերթ կը խրախուսեն, կամ իր դաւաճան ընթացքը փոխել կամ հրաժարիլ ...

Օրմանեան ուրախ է հրաժա-

րիլ... իսկ ժողովո՞ւրդը։ Ո՛չ. մենք չենք ուզեր անոր հրաժարականը. դիմացնիս Բարթողիմէոսի մօլլայական դաւաճանութիւնը կեցած է... Առ այժմ մենք կը գերադասենք Օրմանեանի աւելի փոքր դաւաճանութիւնները Բարթողիմէոսի ճիւաղային, յուդայական դաւաճանութենէն։

* * *

Քիչ մըն ալ տարբեր նորութիւններ։

Բ. Դուռը մեծ պետութիւններու ներկայացուցիչներուն շրջաբերական մը ղրկեց, որով իրմէ կը հեռացնէ Մակեդոնիոյ մէջ ծագելիք դէպքերու պատասխանատուութիւնը։ Այս շրջաբերականին պատճառը Պուլկարական, քրիստոնեայ Ալպանական և նոյն իսկ Յունական քանի մը խոշորկէկ ապստամբութիւններուն երեւալն է։

Տեղական թերթերը (Թրքերէն և գաղղիերէն) ամէն շաբաթ կը լեցուին "շնորհիւ Վ. Ս.ի ձերբակալուեցան կամ սպաննուեցան այսչափ աւազակներ" անմիտ նախադասութիւններով։ Յաճախ միեւնոյն "աւազակը" երկու երեք անգամ կը սպաննուի...

* * *

Երկու ամիս ու կէս է Թուրք կառավարութեան պատուիրած 8,000,000 մավզէր հրացանի փամփուշտները հասած են հոս, բայց գանձարանը ստակ չունենալու պատճառաւ կը մնան Վոսփորի վրայ, օտար նաւուն մէջ։

20,000 կուլտէնէ աւելի տուգանք պիտի տայ կառավարութիւննիս միայն նաւուն տիրոջը՝ ամէն երկու ամիս՝ անօգուտ սպասեցնելուն համար։

Ապսպրելը դիւրին է, բայց վճարել և ապրանքը դուրս հանել դժուար. դիմացինը "ռայա" չէ, որ գլխուն զարնես և առնես։

* * *

Մեծ խնդիր մըն ալ Ասիական Թուրքիոյ երկաթուղիներու խնդիրն է։ Ինչպէս կերեւայ Գերմանացիք յաղթութիւնը պիտի տանին։

Մեծ յանձնաժողով մը արդէն վերադարձաւ ուսումնասիրութիւններու վայրէն և այժմ երկրորդ մը կը պատրաստուի՝ բաղկացած գերման զինուորական էնժէօնիէօրներէն, ժէնէրալ մը և Տէօչ պանքայի ներկայացուցիչներէն։ Ասոր հետ պիտի միանայ նաեւ Թրքական ելեւմտից նախարարութեան քարտուղար Րաֆաուֆ փաշան։ Մասնախումբը պիտի կատարէ իր գործը տեղւոյս գերման հիւպատոս Եգումբրիխի վերին հսկողութեան տակ։

Ուսումնասիրութեան առարկան է՝

Երկաթուղւոյ գիծը Գաղատիայէն կամ Գոնեայէն շարունակել Կիլիկիոյ վրայով (Ատանա, Այնթապ, Հալէպ) մինչեւ Խարբերդ, Տիգրանակերտ, Պաղտատ և Բասորահ—Պարսից ծովը։

Րաֆաուֆի մասնակցութեան նպատակն է որոշել, թէ քիլօմէթրի համար ի՞նչ չափ վարձատրութիւն պիտի տայ տաճիկ կառավարութիւնը։

Երկաթուղիներու խնդիրը այսօր կը կազմէ քաղաքագիտական մարզանքներու գլխաւոր կէտը Գերմանական, Անգլիական, Ռուսական և Ֆրանսական դեսպանատուններու նաեւ Բ. Դրանը մէջ։

Ամէն մէկը կուզեն իրենց դրամատէրներու համար խլել եւղոտ պատառը։

Հաւանականօրէն Վիլհէլմ երկրորդի հայրենակիցները պիտի տանին յաղթանակը... ասոր համար իրենց կայսրը հրատարակեց զինքը "բարեկամ երեք հարիւր միլիոն մահմետականներու"։

* * *

Ձերբակալութիւնները խի՛ստ շատցեր են թէ հայերու և թէ թուրքերու մէջ։ Հոս կը խօսին երեւակայական գօնկրէի մը մասին, որ տեղի ունեցեր է Վիէննա, հայերու և երիտասարդ թուրքերու մէջ և որ միացեալ յայտարարութիւն մը հաներ է...

Արդեօ՞ք իրական բան մըն է, թէ Սուլթանի յղացած ուղեղի հիւանդ երեւակայութեան արդիւնքը՝ չենք գիտեր։

ԲԱԺ

Քղի... Գիւղ, 6 Յուլիս

Սիրելի որդեակ

Մեր վիճակին՝ գիւղին վրայ տեղեկութիւն ուզած էիք. հիմա մէկիկ մէկիկ պատմեմ քեզ. լաւ միտքդ առ գրածս, որ հասկնաս. գիւղիս վիճակը խիստ թշուառ է. Նօթի, չպլախ ասկէ զատ մէկ կողմանէ կառավարութեան տուրքերը կը հաւաքեն, կարող չենք տալ, անհանգիստ կը մնանք։ Անօթի ենք, հաց չունինք ուտելու. մարդ չի վստահիր չարեակ մը հաց, չեն վստահիր 5 ղրուշ տալ որ կառավարութեան տուրքերը տանք ու չի ծեծուինք. բանջար ուտենք, ալ չունինք։ Մերկ կը մնանք ծրար մը կտաւ չեն տար որ ցուրտէն կամ արեւէն պատըսպարուինք։ Այս է մեր հանգըստութիւն. այժմ դուն մտածէ և խորհիր թէ այս վիճակին մէջ ապրող մարդը ինչ կեանք կունենայ։ Այժմ դուն պանդխտութեան դիրքը ես, խիստ կը փափաքիս հայրենիք գալ. սակայն մենք ալ կըսենք երանի թէ մէկ մը կարող ըլլայինք այս տեղէն հեռանալ, անօթութեան, մերկութեան ու թշուառութեան ծոցէն խոյս տայինք...

... գիւղի և մեր տան վիճակը մի ըստ միոջէ պատմեցի. մեզի անպատճառ նամակը հասածին պէս օգնութիւն ընելու ես քանի կալերը չենք լրացուցեր. եթէ չօգնես ցորենները պիտի ծախեն և այս տարի աւելի թշուառ կը լինինք... նամակդ 51 օրէն հասաւ մեզ. և նամակիդ հասած օրը կառավարութեան տուրքերը հաւաքելու էին եկեր. չկրցանք տալ, փախանք. մայրդ տարին բանտարկեցին...........

Գացի... ին տունը և վիճակը հասկցայ. սխալ է եղած, մարդ չէ մնած, սակայն երանի թէ մնած ըլլային, չերթային ու չը տեսնային իրենց խեղճութիւնները։ Ես կարող չեմ գրել այլ մամուլի կը կարօտի որ ընդարձակօրէն հասկցնէ, որ առանց օգնութեան վերջին շունչերնին փչելու վիճակին մէջ են...

Վերջին խօսք. եթէ վիճակնիս այսպէս շարունակէ, վախնամ փոստի փարայ ալ չի մնայ քովերնիս և նամակ գրելու մխիթարութենէն ալ զրկուինք....

Գոնէ բարի լուրեր հաղորդեցէք մեզի։

* * *

Աղեքսանդրիա, 17 Յուլիս

Թղթակցութեան սկսած օրէս իսկ առաջադրած էի՝ արհամար-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍՈՒՐԻԱՆ

Այսօր ուրախալի լուր մը պիտի տամ ընթերցողաց. թէ Սուլթանին ոխերիմ թշնամի մըն ալ աւելցած է։ Շահամոլ Եւրոպան որչափ որ կրնայ թող ջանայ հիւանդ մարդու սառուցեալ մարմինը տաքցնել, անոր ամբողջութիւնը պահելու նկրտիլ, եւ հարստահարուած ու ճնշուած ազգերու արդար բողոքներու տարափներէն չի ազդուելու համար, իրենց ականջները ամուր մը գոցել, սակայն բնական հետեւանքով օր մը չի ակնկալուած մեծ պայթում մը տեղի պիտի ունենայ, որն օր ըստ օրէ անխուսափելի կը դառնայ։ Այս նոր յեղափոխականները Սուրիացիք են, որոնց թիւը Միացեալ Նահանգաց մէջ մօտ 40,000 կը հաշուուին։ Ասոնք «Երիտասարդ Սուրիա» անունով կը ճանչցուին։ Ամերիկայի Միացեալ Նահանգաց ամէն կողմերը ուր Սուրիացիներ կը գտնուին, տենդոտ գործունէութիւն մը կը տիրէ։ Անցեալ շաբթու Ուսթըրի մէջ հրապարակային ժողով մը ունեցան ուրտեղ Ալֆրէտ Ռոզ խօսած է (որն իբր կամաւոր «Բուպա» գնաց եւ Սանթիակոյի մեծ կռուին մասնակցեցաւ. շատ անվեհեր մէկն է, այժմ Սուրիայի, իր Հայրենիքին համար կաշխատի յեղափոխութեան պրոպագանտիստ մընէ)։ Ալֆրէտ Ռոզ ի միջի այլոց հետեւեալ գաղափարները յայտնած է, «Թէ Սուլթանը կոտորածի վախը տալով, կուզէ մեզ ետ պահել գործելէ. սակայն «Երիտասարդ Սուրիան» վախ չգիտէ. պիտի գործէ մինչեւ որ իր նպատակին հասնի. թէեւ մեր տեղ մեր եղբայրները, քոյրերը կը նեղեն. սակայն օր մը բոլոր այդ բարբարոսութիւնք վերջ պիտի գտնեն։ Ասոնք ազգային դրօշակ մը որդեգրած են որ քիչ մը «Բուպա»ի դրօշակին կը նմանի, կարմիր, ճերմակ, կապոյտ եւ մէջտեղը աստղ մը կայ. այս դրօշի տակ պիտի կռուին Սուրիացիք իրենց Հայրենիքի ազատութեան համար։ Երիտասարդ Սուրիա կուսակցութեան կեդրոնն է Նիւ-Եորք. անանկ կերեւի թէ իրենց կազմակերպութիւնն կեդրոնացման վրայ հիմնուած է. սակայն ինչ որ ալ ըլլայ ասոնք մեծ եռանդով մը փակչած են յեղափոխութեան գործին եւ յոյս ունինք որ լաւ գործ մը պիտի ընեն։ Մօտերս ընդհանուր հրապարակային ժողով մը պիտի ունենան, ուր, ինչպէս իրենք կըսեն, գործունէութեանց եղանակներուն վրայ պիտի խօսուի։ Ի սրտէ յաջողութիւն կը մաղթենք «Երիտասարդ Սուրիա»ին։

* * *

Ամերիկայի Հայոց առաջնորդ կոչուածներն կը գործեն եւ կը խորհին այնպէս, որպէս կընեն Կ. Պոլսոյ եւ հայրենիքի որ եւ է թեմի առաջնորդները։ Ամերիկայի գաղթականութիւնը որ մեծ թիւ մը կը կազմէ, օր ըստ օրէ կաճի. սակայն չունի որ եւ է կանոնաւոր կազմակերպութիւն մը, հովը որ կողմէն զօրաւոր փչէ այն կողմ կը ծռին. ի բացառեալ կարգ մը ազատ գաղափարներով տոգորուած յեղափոխականներէ, որոնց թիւը ամբողջ Ամերիկայի մէջ 200ը չի անցնիր. իսկ միացեալ մեծ բազմութիւնը աննպատակ. անսկզբունք եւ անհոգ կերպով կապրին, եթէ նպատակ եւ հոգ մը ունին այն ալ քանի մը սէնթ աւելի շահիլն է։ Ասոնք ուղղութեան մը բերելու համար կարող, աջալուրջ եւ ազատամիտ առաջնորդի մը աշխատութեան պէտք ունինք։ Սակայն ցաւալին հոն է որ կարգ մը առաջնորդներ կը ճգնին ժողովուրդը ագիտութեան եւ խաւարի մէջ պահել. որ իրենց տիրապետութիւնը աւելի հաստատ ըլլայ։

Ազատ գաղափարներ ունեցողները, յեղափոխականը եւ յեղափոխութիւնը հարուածելու համար ոչ մէկ ստոր զէնք գործածել չեն զլանար. Ազգ. ժողովարան մը ունինք ուր արգիլեալ է որ եւ է յեղ. կուսակցութեան ժողով ընել. մինչդեռ աննկարագիր անձանց առջեւ միշտ բաց է. քանի որ հոս խղճի, մամլոյ եւ ամէն ազատ գործոց կատարեալ արտօնութիւն կայ, ինչո՞ւ չօգտուինք այս պատեհութիւններէն։ Ըստ իս ժողովրդի մը յետադիմութեան գլխաւոր պատճառը իր առաջնորդն է. ինչո՞ւ մեր առաջնորդք կը վախնան. հոս բանսարկու Գալացիներ եւ Սուլթանական լրտեսներ չկան որ գործերնին խանգարեն. Ժողովուրդը գիտակցութեան գալով գործ կը պահանջէ...

Մեզի օրինակ կրնայ ըլլալ Երիտասարդ Սուրիան։

ԲՐՈՒՏ

Ուսթր, 6 Յուլիս

——)·(——

հական լուծեամբ անտեսել այն բոլոր գձուձ խեղաթիւրումներն ու հայհոյալից պատասխանները, որոնք գիտէի թէ անխուսափելի պլլուանքն են ամէն անկողմնակալ թղթակցի. և չպատասխանել՝ բայց միայն լուրջ քննադատութիւններու, որոնց բաղխումէն կրնայ լոյս մը ծագիլ և ոչ աղտեղութիւն։ Ահա այս սկզբունքիս հիման վրայ էր որ լռեցի «Փիւնիկ»ի իմ անաչառ քննադատութեանս դէմ ուղղած ճապաղ երդիծանքներուն ու հայհոյութեանց, որոնց իսկական արժէքը դիւրաւ կրնար կշռել ամէն մի խելքը գլուխը ընթերցող։ Իսկ Եգիպտոսի մէջ՝ «Փիւնիկ»ի խմբագրապետին տենդոտ խուզարկութիւնները «Կարիճ»ին ո՞վ ըլլալը հասկնալու համար, և իր բերանացի լալկան ինքնարդարացումները, արդէն ակնյայտնի ցուցուցին որ իր գրածները անզօր կատաղութեան մը արդիւնք էին լոկ։ Զգե՛նք ուրեմն որ խեղճը չարունակէ «Շարժում»ին և իր թղթակիցին դէմ հայհոյելու ու և է առիթ չփախցնելով, սիրտը զովացնել փորձել։

Իսկ ինչ որ այս տողերն գրելու առիթ կու տայ՝ Ալեքսանդրիայէն «Իրաւունք»ի 49 թիւին մէջ երեւցած թղթակցութիւն մըն է, որ թէեւ տեղւոյս ընթերցողներուն համար ծիծաղելի ըլլալու չափ անիմաստ՝ բայց թերեւս լուրջ հերքում մը կարօտի ուրիշ տեղեր։

Անստորագիր Թղթակիցը՝ Ալեքսանտրիայի միթինկին մասին իմ թղթակցութիւնը այնքան ձախող կերպով խեղաթիւրեր և այնպիսի եզրակացութիւններ հաներ է անկէ, որ ապահովաբար քունը գլուխը կարդացած ըլլալու է զայն։ Եւ այս պարագան ալ այնքան մեղադրելի չէ, քանի որ գիտենք թէ՝ Թղթակիցը բաղմազբաղ գրագիր մըն է, որ հազիւ գիշերները առեն կը գտնէ առեւտրական տոմարներէ ու առաջնորդարանի գրութիւններէն տարբեր բաներով զբաղելու։

Նախ՝ իբր ստախօս կը մեղադրէ զիս, միթինկին Դաշնակցականներու և Հնչակեաններու կողմէ կազմակերպուած ըլլալը յայտնելուս համար ու աւելորդ տրամաբանութիւններով կը ջանայ փաստել որ այն լոկ ժողովրդային եղած է։ Ով որ իմ յիշեալ թղթակցութիւնս կարդացած է, կը յիշէ անշուշտ որ անոր մէջ միթինկին ժողովրդային եղած ըլլալուն հակառակող ո և է կէտ չկար։ Բայց ամէն ոք ալ գիտէ, —բացի «Իրաւունք»ի Թղթակցէն—որ ժողովրդային ամէն ձեռնարկութիւն մասնաւոր անհատներու Նախաձեռնութեամբ կիրագործուի, և այդ նախաձեռնութիւնը չփոխեր երբեք անոր ժողովրդային բնաւորութիւնը։ Այսպէս ալ Ալեքսանդրիայի միթինկին նախաձեռնարկ եղան Դաշնակցականները և Հնչակեանները, իրողութիւն մը որ ոչ մէկուն համար գաղտնիք չէ։

Այնուհետեւ աւելի անիմաստ հերքում մըն ալ կը կցէ միթինկին ատենադպիրին մասին՝ պնդելով թէ՝ ան պաշտօնական հանգամանքով չէր որ մասնակցեցաւ։ Ի՞նչ ըսել է պաշտօնապէս կամ անպաշտօն կերպով մասնակցիլ միթինկի մը, երբ հոն բոլոր հայերը հրաւիրուած էին և ընդհանուրին հաւանութեամբ ընտրուեցան ատենապետ մը ու ատենադպիր մը, որու կիրքին մասին ծանօթութիւն մը տալու համար էր լոկ, որ յիշած էի Թաղ. Խորհուրդի անդամ ըլլալը։ Իսկ «Իրաւունք»ի թղթակիցը այսչափով ալ չբաւականանալով պոչաւոր սուտ մը կը գրէ՝ աւելցնելով թէ՝ իբր ես խոստացած ըլլամ ատենադպիրին անունը չհրատարակել։ Զգիտցող մը պիտի կարծէ թէ այդ ձախող թղթակիցը կամ միթինկին յարգելի ատենադպիրը կը ճանչնան ու գիտեն «Կարիճ»ին ո՞վ ըլլալը և ես իրենցմէ մէկուն տուած եմ այդ խոստումը, մինչդեռ ես իրենց բոլորովին անծանօթ եմ և ուրիշ մէկու մըն ալ այդպիսի խոստում մը չեմ տուած։

Վերջացնելով խորհուրդ կու տամ «Իրաւունք»ի Թղթակցին, որ այսուհետեւ քիչ մը ուշքը վրան եղած ատեն թերթ կարդայ, հակառակ պարագային՝ եթէ ժամանակը չներեր, թո՛ղ աւելորդ յոգնութիւն չկրէ թըմբրած ուղեղով ուրիշներուն բարոյականի դասեր տալով ծիծաղելի դառնալու։

ԿԱՐԻՃ

ԵՌԱՁԱՅՆԸ

Անցեալ կիրակի բախտ ունեցանք առաջին անգամ եռաձայն ժամասացութիւն լսելու Վառնայի եկեղեցւոյն մէջ։ Այդ գաղափարը նոր չէ, անոր համար ալ այդ նորութեան վրայ այնքան ուշադրութիւն չը պիտի դարձնեմ։

Առաջ ինչպէս որ կերգէին Վառնայի եկեղեցւոյն մէջ, ի հարկէ այնքան գեղեցիկ, դաշնակաւոր եւ հրապուրիչ չէր որչափ Ռուսաստանի, Տաճկաստանի եւ Եւրոպական այլ քաղաքներու մէջ, բայց եւ այնպէս կը ներկայացնէր բնորոշ բան մը, յատուկ Հայկական եկեղեցւոյ. հիմա՞ ինչ յառաջացաւ երկու, երեք եւ չորս ձայներէ։ Այն որ ծանօթ է Արեւելեան երաժշտութեան պատմութեան, գիտէ որ մինչեւ այսօր երգած են միաձայնութեամբ (unisson) կամ կաւելյնէին (argelpunkt) այսինքն խումբը, կամ ձայնաւորները կերգեն միաձայնութեամբ. երգիչներէն մէկս խմբակը ձայն մը բռնած. սովորաբար oqsuվ եւ fվիճs, ինչպէս նաեւ կը կատարուէր այս տեղի ժամասացութեան միջոցին։

Ցետոյ սկսան կվarsnվ, նոյնիսկ fվիճs, որ երկար ժամանակ տեւեց արեւմուտքի մէջ, մանաւանդ միջին դարերուն։ Բայց ինչո՞ւ այդպէս եղած է եւ ե՞րբ սկսեցին երգել այդպէս այս տեղի եկեղեցւոյն մէջ, այդ որոշելը բաւական դժուար է։ Թուցէ ընդունած են Պուլկարներէն, որոնք ամէն երգի կը ձայնակցին առանց մտածելու արդեօ՞ք այդ ձայնակցումը կը համապատասխանէ թէ չէ գեղարուեստի օրէնքներուն եւ գեղեցկագիտութեան. եւ այդ տեսակ մը անարդարանալի եւ ազեղ սովորութիւնը ցաւ կը պատճառէ այն ամէն լսողին, որ պզտիկ գաղափար մը ունի երաժշտութեան եւ գեղեցկին վրայ։

Ասով մէկտեղ այդ այնքան մեծ դժբաղդութիւն մը չէր, որչափ հիմակուանը. աւելցուցեր են եւ ձայնառ՝ առանց խնայելու լսողներուն ականջները։ Միթէ անոնք որ պատրաստը կարգաւորեցին եռաձայն երգելու, խմբի կառավարիչը եւ երգողները չզգացի՞ն իրենց երգածի ադեղութիւնը, մէկզի թողունք գեղ երգեցողութեան մեքենայական մասը. այդ ուղղակի մեղք է. հայհոյանք դէպի գեղարուեստը։ Այդ երգեցողութիւնը պատրաստողներուն մենք խորհուրդ կու տայինք վերցնել երաժշտութեան sարrակաճ sեunւթիւնը. իսկ եկեղեցական երգերի կարգաւորումը թողուլ աւելի փորձուած եւ տաղանդաւոր գեղարուեստ երաժիշտներուն, որոնք կրնան առանց փոփոխելու մեր ազգային երգեցողութեան բնորոշ կողմերը, լաւ, կանոնաւոր երգեցիկ խումբ մը կազմել, որ թէ մեզ եւ թէ օտարները գոհ ձգէ։

ՆԱՐՏԻ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ (*)

Պաստաւ՝ան թերթիդ 145 և 146 թուոց մէջ իմ անձիս նկատմամբ անպատշաճ ակնարկութիւններ եղած էին Շահապի և Վարդօի կողմանէ։

Շահապի ստայօդ զրպարտութեան պատասխան մը տալ իսկ արժան չեմ համարիր։ Ըստ որում ականատես վկայք կային նոյն քուէարկութեան օրը, ուր խօսք մը անգամ չեղաւ «համալ» բառին։ Այլ միայն իբրեւ գիւանի անդամ՝ ընտրողական ժողովոյ մի որոշումը պարզեցի, որ միայն երկու տարիէ ի վեր ի քաղաքիս որոշ գործով մը հաստատուած պանդուխտ (առանց ընտանեաց) ազգայնոց ընտրող և ընտրելի լինելու իրաւունք տուած էր և չէ թէ տանց և վաճառատանց մէջ ծառայող ազգայնոց։ Եւ որովհետեւ քուէ տուող անձը բեռնակիր մըն էր և անունը ընտրողաց ցանկին մէջ չէր անցած, բեռնակրութիւնը արուեստ մը չէ բոլ։ Իմ այս խօսքս Շահապ չարաչար մեկնեց և ինչպէս որ ալ ի հրապարակ երեւցաւ անլուր բացագանչութեամբ։

Շահապի համար այսչափ. այլ ի՞նչ ըսելու է Վարդօյ. որ առանց խնդրոյն լաւ տեղեակ լինելու իւր ռամկավարական գաղափարները պարզելու կելլէ, իբրեւ թէ իբր ազնուապետական մերժած լինիմ «համալի մը քուէն», քանի որ «համալը» Հայաստանի հայը կը կազմէ Պոլսոյ կամ ուրիշ քաղաքաց հայերը միթէ տարբեր սերնդէ՞ կը լինէին։

Բայց մարդ մը որ Պոլսոյ հայերը տաճկի պալատի «լաճեր» կը համարի, միթէ՞ կարելի է լաւ գաղափարներ ունենայ մեզ համար։ Այլ մենք իրեն նման չենք խորհիր թեթեւակի. մենք կը նկատենք Ֆիլիպէի խնդիրը իբր լոկ տեղական խնդիր մը և չենք չփոթեր հայկական (ընդհանուրի) շահուն հետ։ Անցեալ տարի Ֆիլիպէն իրեն թաղական խորհուրդը ունեցաւ, ըստ կամաց և փափագանաց Վարդօի՝ ընտրեալ մեծ մասամբ պանդուխտ ազգայիններէ, այլ ոչ կրցաւ վարժարանը բարեկարգել և ո՛չ ալ ճամբուած դասատուին տեղ յաջորդ մը կարգել։ Այլ միայն զբաղեցաւ Արսէն վարդապետի խնդրով, մինչեւ որ իր հրաժարականն ալ տալու ստիպուեցաւ։ Կասն չի Ֆիլիպէցին կաղաղակէր թէ անիրաւ է այս Թաղ. խորհրդոյ ընտրութիւնը. և իրաւունք ալ ունէր, զի Սահմանադրութեան օրէնք մը ունինք որ այս կարգի պանդուխտները կը զրկէ քուէարկութեան իրաւունքէ, իբր մի թաղի սեփհական ժողովուրդ չը նկատելով զանոնք, որք միշտ տեղափոխութեան ենթակայ են։

Ուրիշ կուսակցութիւն մը հակառակը կը պնդէր, ուրեմն ի՞նչ ընելու էր այս երկու կուսակցութիւնները իրարու համաձայնեցնելու համար, հարկ էր թէ՛ միոյն և թէ՛ միւսին իրաւունքը չի բռնաբարել, ուստի ընտրողական ժողովը այս միջոցը գտաւ միայն քուէարկութեան իրաւունք տալով այն ազգայնոց՝ որք թէեւ առանց ընտանեաց, որոշ գործով մը հոս հաստատուած են երկու տարիէ ի վեր։

Այսպէս քուէարկութեան լաւագոյն արդիւնք մը ունեցանք և խառն երկու կուսակցութիւններէ և չեզոք անձերէ պատուաւոր ու հմուտ անդամներ ընտրուեցան Թաղ. խորհուրդը կազմելու համար, որք, յուսով ենք, թէ վարժարանը բարեկարգ վիճակի մէջ պիտի դնեն՝ օրինաւոր և հմուտ դաստիարակ բերել տալով ուրիշ քաղաքներէ, թէ՛ վարժարանին պիտոյքն՝ որ ամէն տարի

(*) Շատ ուրախ ենք որ դուք չէք արտասանել այդ վիրաւորական նախադասութիւնը։ Աւելի լաւ է մենք սխալված լինինք եւ նկատողութիւն ստանանք, քան թէ որ եւ է հայ այդ տեսակ խօսքեր արտասանէ։ Սխալվում էք պարոն, կարծելով որ անցեալ տարվայ ընտրութիւնները իմ կամքիս եւ փափագիս համաձայն են եղել։ Ես այդ տեսակ խնդիրների մէջ ոչ մի տեղ եւ երբէք չեմ խառնվել։

Այո, յարգելի պարոն, ես համարձակվում եմ բոլոր այն պոլսեցիներին ճarkելի ղաճեr անուանել, որոնք իրանց լռութեամբ թուրք են, բայց ոչ բոլոր պօլսեցիներին։

ՎԱՐԴՕ

կը պակսի, հանգանակութեամբ պիտի լրացնեն և թէ՝ աղքին ժամանակէ մը ի վեր առկախ մնացած տոկոսաւոր պարտքը պիտի հատուցանեն, որոց կատարմանը փափաքողներէն մին պիտի ըլլամ և ես։

Աղաչելով որ զայս ձեր պատուական թերթին մի թուոյն մէջ հրատարակելու բարեհաճիք։

Բժիշկ Մ. Փափազեան

Ֆիլիպէ, 21 Յուլիս

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Քաղաքիդ մէջ հրատարակուող թերթի մը 51 եւ 53 թիւերու մէջ Դ. եւ Ե. ստորագրութեամբ յօդուածներ տեսայ, ուր յայտնուած եմ ես իբրեւ պատճառ այն խռովութեանց, որոնք տեղի ունեցան վերջերս տեղւոյս ազգայնոց մէջ։ Զարմանալի չէ թէ ինչպէս երեւան կուգան այսպիսի զրպարտութիւններ, որոնք իմ պաշտօնը չօշափելով հանդերձ՝ արհամարհանաց միայն արժանի էին՝ նկատելով որ զրպարտիչները կը պատկանին այնպիսի մի դասակարգի, որք իրենց տգիտութեան չնորհիւ ուրիշներու վատ դիտաւորութեանց գործիք դառնալով ամէն ստորնութիւն յանձնառու եւ սկզբունքէ զուրկ մարդիկ են։ Հետեւաբար առաջին անգամ արժանապատուութիւնս թոյլ չտուաւ ինձ այդ չարախօս լեզուներու պատասխանելով ինքզինքս անոնց աստիճանին ստորնացնելու։ Դժբաղդաբար տեսնելով որ մի քանի դատարկապորտներու ինձ դէմ ըրած զրպարտութիւնները հրապարակաւ կը յայտնուին այնպիսի մի թերթի մէջ, որ շատ անգամներ ինքզինքը լուրջ, անայտառ եւ անկողմնակալ ածականներով հռչակելու պարծենկոտութիւնը ունեցած է—կը պարտաւորիմ ցաւ ի սիրտ ըսելու որ անարժան յօդուածագրէ մը աւելի մեղադրելի է մի արդար կարծեցեալ (*) խմբագիր, որ ճշմարտութիւնը քննելու ջանալէ առաջ իր թերթի սիւնակներուն մէջ կը սիւրնկալէ այնպիսի գրութիւններ, որոնց հեղինակներու բուն նկարագրին անծանօթ է ինք։ Պ. խմբագիրը անշուշտ գիտէ թէ ինք պատասխանատու է Դ. եւ Ե. ծածկանուններու գրութեանց, զորոնք պիտի պարտաւորի երեւան հանել արդարութեան առջեւ, որուն համար ներկայացուցեր եմ մի բողոքագիր ինձի եղած զրպարտութեանց դէմ։ Այժմ ուշ է արդէն մի առ մի պատասխանել ինձ վերագրուած պատճառներուն, եւ ես չեմ ուզեր լրագրութեան մէջ երկարօրէն զբաղիլ մի խումբ չատախօսներով. վասն զի արդարութեան առջեւ գրաւոր փաստերով պիտի կարողանամ ապացուցանել իմ անպարտութիւնը—կնիքը յանձնրծ լինելու եւ այլ խնդիրներու մէջ։ Պ. խմբագիրը թող այն ատեն իր ականջներով լսէ եւ արդարութեան հետ միասին հաստատէ թէ իմ պատիւը արատաւորելու յաւակնութիւնը ունեցողները մի քանի պնակալէզ թափառաշրջիկներ են, որոնք հացի խնդրոյն համար չարամիտ հակառակորդներու դաւադրութեանց զոհ կերթան։ (*)

Գ. Ունճիեան

Պուրկաս, 23 Յուլիս

——)·(——

(*) Ցանկալի էր որ Ունճիեանին մեղադրողները իրանց անունով ասպարէզ գային, ճշմարտութիւնը երեւան հանելու եւ արդարն ու մեղաւորը որոշելու համար։ Ծ. Խ.

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Սալմաստէն «Մշակ»ին գրուած թղթակցութիւն մը շատ տխուր գոյներով կը նկարագրէ տեղւոյն վիճակը։

Երկրին սովատանջ ժողովուրդը, որ իր օրուան հացը ճարելու մտածումին մէջ ընկղմած է. ենթակայ է եղած քրդական յարձակումներու. արդէն աւազակներու ձիաւոր խումբ մը յարձակեր է Վարդան անունով հայաբնակ գիւղի մը վրայ. սպաներ են երկու մարդ և ուրիշ երկուք ալ ծանրապէս վիրաւորեր են։

Գիւղացիները իրենց գիւղը և հունձքերը թողլով փախեր են։

Խոյի ճամբուն վրայ ալ քիւրտերը չորս վաճառականներու վիզը կարեր են։ Պարսիկ կառավարութիւնը ապիկար ու անտարբեր է եղածներուն. և կը վախցուի որ այդ հրոսակներու ասպատակութիւններէն ամբողջ երկիրը աւրուի և գրաւուի։

—Ռուսական յափշտակութիւններէն քաջալերուած Վրացիներն ալ սկսեր են գրաւելու փորձեր ընել հայոց եկեղեցիները Կովկասի մէջ։

Գօրու գաւառի Տղվիա գիւղի Ս. Նշան եկեղեցին որ կը վերանորոգուեր վերջերս, վրացիները արգելք յարուցեր են ըսելով թէ այդ եկեղեցին կը պատկանի իրենց ցեղին, որ միանգամայն ուխտատեղի ալ է և ուր կը յաճախեն նա և վրացիները։

Խնդիրը հիմակ քննութեան տակ է, և հայերը բաւական ապացոյցներ ունին որ եկեղեցին միշտ եղած է հայկական։

— Պ. Յարութիւն Զաքրեան որ իր հիւանդութիւնը դարմանելու համար Պուքրէշ գացած էր մեռեր է յուլիս 26ին։

Լեռան մարդու (որ երեսուն տարի է ի վեր լեռներէն հեռացած էր) գտած լրագրական անյաջողութիւնները և ժողովրդի ցցուցած ցուրտ անտարբերութիւնը իր և իրեններուն ազգաշէս ուղղութեան դէմ, ալ աւելի փութացուցին քայքայումը իր մաշած մարմնին։

Վառնայի մէջ ամենաթշուառ օրեր անցուց, հիւանդ ու լքուած և այսօր գոնէ հայաշատ կեդրոնի մը մէջ չէ որ գերեզմանի մը արժանանայ։

«Կատակը և Տաւրոսը» Զաքքրեանին վերջին յիշատակը կը մնան և ապագայ սերունդը կը կարէ իր արդար դատաստանը. քանի որ ներկան դեռ կիրքերով լեցուն է։

— Երկուշաբթի կէս օրէն ետք ժամը երկու ու կէսին, հաճի Բանաքս, Կրօզդի զբօսավայրին մէջ կատարուեցաւ քաղաքիս Աղջկանց Կրթարանի վիճակաւորներու բաշխման հանդէսը։ Երգեր երգուեցան, խաղեր եղան, ճառեր խօսուեցան և հայ. պուլ. ֆրանս. և անգլ արտասանութիւններ եղան. (մեղք որ գերմաներէն չկար)

Հանդիսականները երկսեռ, որոնք հակառակ տեղւոյն հեռաւորութեան և օդի ջերմութեան բազմաթիւ էին, տղայոց յառաջդիմութիւնը ծափահարելէ. և վարժարանի տնօրէնին ճառն ալ մտիկ ընելէ... քրտնելէ ետքը մեկնեցան։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Դելկասէն Բեթերսպուրկ գացեր է։

— Պարսկաստանի Բէտէր Բուշեր քաղաքի մէջ խռովութիւններ ծագած են ժանտախտի դէմ ձեռք առնուած միջոցներուն համար։ Կրօնական պետերը շահին հեռագրած են առ այժմ ձեռք առնուած առողջապահական միջոցները առկախ թողուին ժողովուրդը ոտքի ելած է և քաղաքը կայրէ։ Հեռագրական գիծը ոչնչացուցած են. եւրոպացիներու դրութիւնը վտանգաւոր է։ Անգլիական երկու հրետանաւ նաւահանգիստն են։

— Անգլիացի պատգամաւոր մը Լոնտոն նշանաւոր յայտարարութիւն մը ըրած է, Զինի ապագայի մասին, ըսելով թէ՝ Զինաստանի մէջ բարենորոգում կամեցողները կը վայելէին Ճաբոնի կառավարութեան աջակցութիւնը։ Անյաջող ապստամբութեան գործիքներէն մին Շանխայի ճաբոնական գօնսիլն էր։ Եթէ բարենորոգչական շարժում մը տեղի ունենայ, Ռուսիոյ և Ճաբոնի մէջ պատերազմ պիտի ծագի։

— «Թայմզ»ի թղթակիցը հեռագրով մը Դէլկասէի յանկարծակի Բեթերսպուրկ երթալու մասին երկար խօսելէ վերջը, վերջապէս հետեւեալ բացատրութիւնը կուտայ. թէ՝ Դէլկասէ Բեթերսպուրկ գացեր է Զարին արգելք հանդիսանալու իր գահէն հրաժարելու մտքէն։

Թղթակիցը կաւելցնէ թէ ինքը տեղեկութիւն ունի որ Զարը սարսափելի յուսախաբութիւններէ կը տանջուի։ Օրինակի համար հայերու դժբաղդութեանց միջոցին պատուիրած է իր սեփական գանձէն 500,000 ռուպլի ղրկել անոնց, և բաւական ատենէ վերջը ստուգել ուղած է և հասկցած է որ սանթիմ մը հայերուն չէ ղրկուած։ Ժառանգ չունենալն ալ կը տանջէ զանի։

Իր գահէն հրաժարիլը ուշացուցած է և Լահէի ժողովը. որովհետեւ կը նկատէին թէ նախ քան ժողովը վերջանալը գահէն հրաժարիլը, խօսքի տերը չըլլալ կը նշանակէր։ Զարը միշտ կը կրկնէ եղեր «ես անկարող եմ իմ ծրագիրներս իրագործել. եթէ ժառանգ մը ունենայի գահս կը պահէի անոր համար»։

Համաձայնած էր գահը պահելու մինչեւ Խաղաղութեան Վեհաժողովին վերջը, սակայն ասոր արդիւնքն ալ աւելի պարտութեան մը նմանեցաւ։ Դէլկասէն շտապեր է Զարին քովը, նախ քան անոր Դարմշդատ երթալը, ուր կայսրը կուզէ եղեր իրագործել իր ծրագիրը, համոզել որ Ֆրանսայի տուած իր պատուաւոր խօսքէն ետ դառնալ, փախուստալ կը նշանակէ իր հրաժարումը. որովհետեւ չի հասկցուիր թէ նոր գահաժառանգ Միշելիշխանը ինչ կրնայ ըլլալ։

«Թան»ը այս տեղեկութիւնները «վականներու» վէպ կը համարէ։

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ԿՐԹԱՐԱՆ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ՅԵՐԿՍԵԱՑ

Բ. ՏԱՐԵՇՐՋԱՆ

Վարժարանս խիստ դժուարին պայմաններու մէջ յաջողապէս բոլորելով իր առաջին շրջանը, կը վերաբացուի յառաջիկայ Սեպտ. 1/13ին, աւելի լայն ծրագրով մը եւ շրջապատուած նոր ուժերով։

Կաւանդուին, բացի հայերէն, պուլկարերէն ու ֆրանսերէն լեզուներէն՝ որոնք պարտաւորիչ են, նաեւ անգլիերէն ու գերմաներէն՝ կամաւոր։

Խնամքով կաւանդուին նաեւ ծրագրուած գիտութեանց բոլոր ճիւղերը, գործնական ու փորձառական մէթոտով։ Դպրոցական առարկաներու անհրաժեշտ հաւաքածոյ մը կը դիւրացնէ թէ՛ ուսուցչին եւ թէ՛ ուսանողին աշխատութիւնները։

Զութակի եւ դաշնակի դասեր՝ մասնաւոր վճարումներով։

Աշակերտք եւ աշակերտուհիք պիտի մասնակցին գրական, գիտական եւ երաժշտական երեկոյթներու, որոնք պիտի կազմակերպուին յառաջիկայ շրջանին, յօգուտ բարենպաստակ ձեռնարկներու, եւ որոնք պիտի ծառայեն՝ միեւնոյն ատեն իբր գործնական դասեր՝ վարժեցնելու ուսանողները հանրային կեանքի պարտականութեանց։

Ֆիզիքական մարզանքներու համար մասնաւորապէս պիտի ընտրուին անգղիական խաղեր։ Ծախքը վճարող աշակերտները պիտի կրնան հետեւիլ նաեւ թիավարութեան եւ նշանաւորութեան փորձերու։

Վարժարանս հաստատուած ըլլալով քաղաքին ամենէն մաքուր եւ օդասուն մասին մէջ, կը լրացնէ առողջապահական ամէն պայմանները։ Կարգապահութիւն, մաքրութիւն, խնամուած սնունդ եւ բժշկական կանոնաւոր այցելութիւնք առողջական լաւագոյն վիճակ մը կապահովեն գիշերօթիկ ուսանողներուն համար։ Փափաքող ծնողաց պատրաստ եմ տալ պատուաւոր եւ հասկցող անձնաւորութիւններու բացարձակ երաշխաւորութիւնը։

Գիշերօթիկ աշակերտուհիներու համար մասնաւոր չէնք յատկացուած է։

Ընդունելութեան պայմաններու եւ աւելի ընդարձակ տեղեկութեանց համար նամակով կամ անձամբ՝ դիմել առ՝

Հիմնադիր–Տնօրէն
Հայկական–Կրթարանի
ԿՐՕՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Печатница „Взаимность“ Варна.